Կազմված է <17> ---01--- 2012թ.
Բաղկացած է 9 թերթից
Տպագրված է 5 օրինակ
Օրինակ 1

Հավելված -10-
ՀՀ կրթության և գիտության
նախարարի
<20> ---01---2012թ. 38-Ա.Ա
հրամանի
---------- Ա. Աշոտյան

Գրանցված է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 14.07. 2009 Թ.
Գրանցման թիվ 29.210.02439
Վկայական 03 Ա 084223
ՀՎՀՀ 05536355
14.07.2009թ. գրանցված կանոնադրության
թիվ 1 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի կողմից
<03> ---02--- 2012թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԹԻՎ 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

2012թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության եվ գիտության նախարարության
«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առեվտրային
կազմակերպության

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության եվ գիտության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ուսումնարան) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ հանդիսացող նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն է:

2. Ուսումնարանի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության (այսուհետ՝ հիմնադիր): Ուսումնարանն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ, ինչպես նաև հիմնարկ, մասնաճյուղ կամ ներկայացուցչություն ունենալ միայն հիմնադրի որոշմամբ:

3. Ուսումնարանի լրիվ անվանումն է՝

1) հայերեն՝ Հայաստանի Հանրապետության կրթության եվ գիտության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) ռուսերեն՝ Государственная Некоммерческая Организация <Гюмрийское государственное ремесленное училище N4> Министерства образования и науки Республики Армения

3) անգլերեն՝ «Gyumri craftsman state school N4» Non-Commercial State Organization of the Ministry of Education and Science of the Republic of Armenia.

4. Ուսումնարանի գտնվելու վայրն է՝

ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի, Անի թաղամաս, 11 փողոց 5/2 :

5. Ուսումնարանը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Ուսումնարանն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Ուսումնարանն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, նախահաշիվ և բանկային հաշիվ:

7. Ուսումնարանը կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ: Կնիքը, ձևաթղթերը, խորհրդանիշը և անհատականացման այլ միջոցներ ձևավորելիս, անհրաժեշտության դեպքում, հայերենին կարող են զուգակցվել ռուսերեն և (կամ) անգլերեն լեզուներ:

8. Ուսումնարանի կառավարման մարմիններն են՝

1) հիմնադիրը.

2) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ՝ լիազորված մարմին).

3) ուսումնարանի կոլեգիալ կառավարման մարմինը՝ ուսումնարանի խորհուրդը (այսուհետ՝ խորհուրդ).

4) ուսումնարանի գործադիր մարմինը՝ ուսումնարանի տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

9. Ուսումնարանն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

10. Ուսումնարանում դասավանդման և դաստիարակության լեզուն գրական հայերենն է:

11. Ուսումնարանում գործավարությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

12. Ուսումնարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

II. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

13. Ուսումնարանի գործունեության հիմնական առարկան նախնական մասնա-գիտական (այսուհետ՝ արհեստագործական) հիմնական և լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացումն է: Ուսումնարանը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել նաև փորձնական մասնագիտական կրթական ծրագրեր:

14. Ուսումնարանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով՝

1) իրականացնում է ուսանողների և ունկնդիրների ընդունելություն, ապահովում է նրանց ուսումնական գործընթացի, ընթացիկ և պետական ամփոփիչ ատեստավորման կազմակերպումն ու անցկացումը.

2) կարող է իրականացնել մեծահասակների կրթության և ուսուցման ծրագրեր.

3) ապահովում է դասախոսների, արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը.

4) իրականացնում է արհեստագործական կրթության զարգացմանը նպաստող ծրագրեր.

5) աջակցում է ուսանողական ինքնակառավարմանը, ուսանողների մասնակցությանն ուսումնական հաստատության կողմից իրականացվող ծրագրերում.

6) միջոցներ է ձեռնարկում ուսումնարանի ուսանողների ինքնազարգացման, առողջության պահպանման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի ապահովման և սննդի կազմակերպման համար:

15. Ուսումնարանի գործունեության հիմնական նպատակներն են՝

1) ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով կրթության կազմակերպումը, անձի մտավոր և հոգևոր զարգացման պահանջմունքների բավարարումը.

2) արհեստագործական կրթության որակի ապահովումը և բարելավման համապատասխան համակարգի կիրառումը.

3) ուսումնական գործընթացի կազմակերպման թափանցիկության և հրապարակայնության ապահովումը.

4) բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, նրա կրթական և մշակութային մակարդակի բարձրացումը.
5) սոցիալական գործընկերների հետ համագործակցության ապահովումը.
6) ուսանողների մեջ հմտությունների և աշխատանքի նկատմամբ պատասխանատվության արմատավորումը:
16. Ուսումնարանը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝
1) նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն.
2) միջնակարգ կրթության երրորդ աստիճան (ավագ դպրոց).
3) կրթություն՝ մեծահասակների համար, և ուրիշ կարգերում չներառված այլ կրթություն.
4) հրատարակչական գործ.
5) կազմակերպություններին կից ճաշարանների ծառայություններ.
6) հանրակացարանների շահագործում.
7) սպորտի բնագավառի այլ գործունեություն:
17. Ձեռնարկատիրական գործունեության իրականացման համար ուսումնարանն իրավունք ունի հիմնադրի որոշմամբ ստեղծելու տնտեսական ընկերություններ կամ դառնալու նրանց մասնակից:
18. Ուսումնարանը կրթական ծրագրերն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ լիցենզավորման դեպքում:
19. Ուսումնարանի գործունեության ընթացքում առաջացած շահույթը (միջոցները)՝ հիմնադրի սահմանած կարգով օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար:

III. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՄԱՐՄՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

20. Հիմնադիրն ունի ուսումնարանի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի: Հիմնադիրն օրենքով սահմանված իր իրավասությունների շրջանակում՝
1) սահմանում է ուսումնարանի գործունեության առարկան և նպատակները, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակները.
2) սահմանում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու նպատակով, ուսումնարանի կողմից տնտեսական ընկերություններ ստեղծելու կամ նրանց մասնակից դառնալու կարգը.
3) սահմանում է ուսումնարանում ուսուցանվող մասնագիտությունների ընդհանրական բնութագրերը և ցանկերը՝ ըստ կրթական ծրագրերի, ուսուցման հիմքի, ձևի և տևողության.
4) սահմանում է ուսումնարանի և ուսումնարանում ուսուցանվող կրթական ծրագրերի լիցենզավորման կարգերը,

5) սահմանում է ուսումնարանին ֆինանսական միջոցների տրամադրման կարգը՝ ներառյալ ուսման վարձը փոխհատուցելու, կրթաթոշակ սահմանելու, ուսանողական նպաստ և ուսումնական վարկ հատկացնելու կարգերը.

6) սահմանում է ուսումնարանում մասնագիտական կրթության իրականացման առկա, հեռավար (դիստանցիոն), դրսեկության (էքստեռնատի) և ներառական ձևերով ուսուցման կարգերը.

7) սահմանում է ուսումնարանի կողմից տրվող պետական նմուշի ավարտական փաստաթղթերի ձևերը.

8) վերակազմակերպում կամ լուծարում է ուսումնարանը.

9) իրականացնում է այլ լիազորություններ:

21. Լիազորված մարմինն իրականացնում է ուսումնարանի ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը: Լիազորված մարմինը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իր իրավասությունների շրջանակում՝

1) հաստատում է ուսումնարանի կանոնադրությունը և դրանում կատարված փոփոխությունները.

2) սահմանում է ուսումնարանի կառավարման համակարգը.

3) սահմանում է խորհրդի ձևավորման կարգը, հաստատում է խորհրդի անվանական կազմը, ինչպես նաև վաղաժամկետ դադարեցնում է խորհրդի կամ նրա անդամի լիազորությունները.

4) խորհրդի ընտրած տնօրենի թեկնածուի (թեկնածուներից մեկի) հետ կնքում է աշխատանքային պայմանագիր.

5) իրականացնում է արհեստագործական կրթական ծրագրերի լիցենզավորումը.

6) սահմանում է ուսումնարանում իրականացվող մասնագիտական կրթության մասնագիտությունների մասնագիտացումների ցանկերը՝ համապատասխան ոլորտների լիազորված մարմինների առաջարկությամբ.

7) սահմանում է պետական կրթական չափորոշիչները և որակավորումների բնութագրերը՝ ըստ մասնագիտությունների ու կրթական աստիճանների.

8) սահմանում է ուսումնարանի ուսանողների (ունկնդիրների) ընդունելության կարգը.

9) սահմանում է ուսումնարանի ուսանողների (ունկնդիրների)՝ այլ ուսումնական հաստատություն տեղափոխման, ինչպես նաև ուսումնարանում մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու կարգերը.

10) սահմանում է ուսումնարանի ուսանողներին (ունկնդիրներին) ակադեմիական արձակուրդ տրամադրելու կարգը և ժամկետները.

11) սահմանում է ուսումնարանում ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած անձի ուսանողական իրավունքները վերականգնելու կարգը.

12) սահմանում է ուսումնարանում փորձնական կրթական ծրագրերի իրականացման կարգը.

13) սահմանում է ուսումնարանի սովորողների գիտելիքների փոխադրական և ամփոփիչ ստուգման կարգը.

14) սահմանում է ուսումնարանի մանկավարժական և ղեկավար կադրերի որակավորման կարգը.

15) սահմանում է ուսումնարանին սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող պետությանը պատկանող գույքի կազմը.

16) համաձայնություն է տալիս ուսումնարանի գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

17) վերահսկողություն է իրականացնում ուսումնարանին ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության, ուսումնարանում պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարման, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման և նրանց պատրաստման որակի, ինչպես նաև ուսումնարանում ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ.

18) լսում է ուսումնարանի գործունեության մասին հաշվետվություններ, քննում է դրանց գործունեության վերստուգման արդյունքները.

19) կասեցնում, անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչում տնօրենի կամ խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող իրավական ակտերը.

20) ուսումնարանի լուծարման դեպքում նշանակում է լուծարման հանձնաժողով և հաստատում է լուծարման հաշվեկշիռը.

21) իրականացնում է այլ լիազորություններ:

IV. ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

22. Խորհուրդը բաղկացած է 11 անդամից, որոնց անվանական կազմը սույն կանոնադրության 23-րդ կետով սահմանված կարգով առաջադրված անձանց թեկնածությունների հիման վրա հաստատում է լիազորված մարմինը: Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է:

23. Խորհրդի անդամներից՝

1) 1-ի թեկնածությունը լիազորված մարմնին առաջադրում է ՀՀ Շիրակի մարզպետը.

2) 5-ին, այդ թվում՝ պետական պաշտոն զբաղեցնող, գիտության, մշակույթի և տնտեսության տարբեր ոլորտների ներկայացուցիչներ՝ 1, սոցիալական գործընկերներ՝ 3, տարածքային զբաղվածության ծառայության ներկայացուցիչներ՝ 1, որոշում է լիազորված մարմինը.

3) 2-ի թեկնածությունն ուսումնարանի մանկավարժական աշխատողների կազմից լիազորված մարմնին առաջադրում է ուսումնարանի մանկավարժական խորհուրդը.

4) 3-ի թեկնածությունն ուսումնարանի ուսանողների կազմից լիազորված մարմնին առաջադրում է ուսումնարանի ուսանողական խորհուրդը:

24. Խորհրդի անդամ չի կարող լինել տնօրենը:

25. Խորհուրդն իր կազմից, քվեարկությանը մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ, փակ գաղտնի քվեարկությամբ ընտրում է խորհրդի նախագահ: Խորհրդի նախագահ չի կարող լինել խորհրդում ուսումնարանի ուսանողական խորհրդի

ներկայացուցիչը, ուսումնարանի հաստիքային աշխատողը (ամբիոնի վարիչ, առարկայական (ցիկլային) հանձնաժողովի նախագահ, դասախոս, այլ աշխատող:

26. Խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իր աշխատակարգով նախատեսված կարգով՝

1) քննարկում և լիազորված մարմնի հաստատմանն է ներկայացնում սույն կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին առաջարկություններ.

2) հաստատում է իր աշխատակարգը, ընտրում է խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, քարտուղար.

3) հաստատում է ուսումնարանի հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները.

4) սահմանում է տնօրենի ընտրության մրցութային ընթացակարգը, կազմակերպում, անցկացնում է մրցույթը և մրցույթում հաղթող ճանաչված տնօրենի թեկնածուին (թեկնածուներին) ներկայացնում է լիազորված մարմնին.

5) իրականացնում է տնօրենի գործունեության ընթացիկ վերահսկողությունը, քննարկում և հաստատում է նրա հաշվետվությունները.

6) սույն կանոնադրության 36-րդ և 41-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում կարող է լիազորված մարմին առաջարկություն ներկայացնել տնօրենի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ.

7) ուսումնարանի իրավասությանը վերապահված ներքին կառավարման հարցերի վերաբերյալ տնօրենին և խորհրդին խորհրդատվական առաջարկություններ (եզրակացություններ) ներկայացնելու նպատակով, տնօրենի առաջարկությամբ, ուսումնարանի փոխտնօրենների, ամբիոնի վարիչների, բաժանմունքների վարիչների, մանկավարժների և ուսանողական խորհրդի ներկայացուցիչների կազմից կարող է ստեղծել ուսումնարանի տնօրինական խորհուրդ, սահմանել դրա իրավասությունը և գործունեության կարգը.

8) ուսումնարանի ուսանողների կրթության և դաստիարակության որակի կատարելագործման, մանկավարժական կազմի աշխատողների մանկավարժական վարպետության բարձրացման, ինչպես նաև առաջավոր փորձի կիրառման նպատակով, տնօրենի առաջարկությամբ, կարող է ստեղծել ուսումնարանի մանկավարժական, ուսումնամեթոդական մասնագիտական խորհուրդներ, ինչպես նաև մասնագիտական և առարկայական հանձնաժողովներ, սահմանել դրանց կազմերը, իրավասությունը և գործունեության կարգերը.

9) հաստատում է ուսումնարանի ռազմավարական ծրագրերը.

10) տնօրենի առաջարկությամբ կարող է սահմանել ուսումնարանի մանկավարժական աշխատողների նշանակման մրցութային ընթացակարգ, կազմակերպել և անցկացնել մրցույթը.

11) հաստատում է ուսումնարանի տնօրենի և մանկավարժների գնահատման իրականացմանն ուղղված միջոցառումները.

12) լիազորված մարմին է ներկայացնում ուսումնարանի տարեկան ծախսերի նախահաշվի նախագծի վերաբերյալ իր առաջարկությունները.

13) սահմանում է ուսումնարանում մեկ ուսանողի համար ուսման վճարի չափը՝ համաձայնեցնելով լիազորված մարմնի հետ.

14)տնօրենի առաջարկությամբ սահմանում է ներուսումնարանային կրթաթոշակներ և դրանց տրամադրման կարգը, ինչպես նաև ուսանողական նպաստներ, պետական և ներուսումնարանային կրթաթոշակներ ստացող ուսանողների անվանական կազմերը.

15) հիմնադրի սահմանած կարգով որոշում է ուսումնարանի շահույթի տնօրինման ուղղությունները.

16) տնօրենի առաջարկությամբ քննարկում է ուսումնարանի ուսումնական պլանները և առարկայական ծրագրերի նախագծերը.

17) տնօրենի առաջարկությամբ քննարկում և առաջադրում է պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները.

18) ուսումնարանի գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկություններ է ներկայացնում լիազորված մարմին.

19) հաստատում է ուսումնարանի ստորաբաժանումների կանոնակարգերը, ներքին կարգապահական և այլ կանոններ, եթե հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

20) հաստատում է տնօրենի և մանկավարժների պարգևատրման, նյութական խրախուսման, ինչպես նաև պաշտոնից ազատման մեխանիզմների ներքին կանոնակարգերը.

21) հաստատում է խորհրդի անդամների վերապատրաստման կարիքների գնահատմանը և նրանց գործողություններին ուղղված միջոցառումները.

22) հաստատում է ուսումնարանի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

23) համաձայնություն է տալիս սեփականության իրավունքով ուսումնարանին պատկանող գույքի արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակիորեն կամ անուղղակիորեն գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարելու հնարավորության հետ կապված խոշոր գործարքների կնքման համար, եթե հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ.

24) իրականացնում է այլ լիազորություններ, ինչպես նաև հաստատում է ուսումնարանի գործունեությունը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթեր, եթե հիմնադրի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ.

27. Խորհրդի նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր 3 ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը՝ իր, խորհրդի անդամների մեկ երրորդի կամ տնօրենի նախաձեռնությամբ: Խորհրդի անդամների մեկ երրորդի պահանջով խորհրդի նիստը գումարվում է նախաձեռնողների սահմանած ժամկետում և օրակարգով:

28. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի

անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի միայն մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում: Խորհրդի նիստերն արձանագրվում են:

29. Խորհրդի նիստերը որպես կանոն բաց են: Խորհրդի նիստերն անցկացվում են սույն կանոնադրությանը և խորհրդի աշխատակարգին համապատասխան: Խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել ուսումնարանի աշխատողներ, ուսանողներ և նրանց ծնողներ, հասարակայնության, կազմակերպությունների ներկայացուցիչներ:

30. Խորհրդի անդամի լիազորությունները դադարում են խորհրդի լիազորություններն ավարտվելու դեպքում կամ, եթե նա՝

1) հրաժարական է տվել.

2) առաջադրված է եղել ուսումնարանի ուսանողական խորհրդի կողմից և կորցրել է ուսումնարանի ուսանողի կարգավիճակը.

3) առաջադրված է եղել ուսումնարանի մանկավարժական կազմի խորհրդի կողմից և կորցրել է ուսումնարանում իր աշխատանքը.

4) դատապարտվել է ազատազրկման.

5) դատարանի վճռով ճանաչվել է անգործունակ.

6) առանց հարգելի պատճառի երեք անգամ չի մասնակցել խորհրդի նիստերին.

7) մահացել է:

31. Խորհրդի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել լիազորված մարմնի որոշմամբ, եթե խորհուրդն առանց հարգելի պատճառի երեք անգամ անընդմեջ նիստեր չի գումարում կամ որոշում չի ընդունում իր լիազորությանը վերապահված հարցերի վերաբերյալ:

32. Խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել լիազորված մարմնի որոշմամբ՝ խորհրդի այդ անդամի թեկնածությունն առաջադրած մարմնի առաջարկությամբ:

33. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է սույն կանոնադրության 22-րդ և 23-րդ կետերի պահանջներին համապատասխան, թափուր տեղ առաջանալուց հետո տասնօրյա ժամկետում:

34. Խորհրդի որոշումները կարող են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բողոքարկվել՝ լիազորված մարմնին կամ դատարան:

V. ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

35. Տնօրենի թեկնածուն (թեկնածուները) ընտրվում է (ընտրվում են) խորհրդի սահմանած մրցութային ընթացակարգով: Լիազորված մարմինը մրցույթի արդյունքում խորհրդի կողմից հաղթող ճանաչված տնօրենի թեկնածուի կամ թեկնածուներից մեկի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում կնքում է պայմանագիր:

36. Տնօրենի պաշտոնը չի կարող զբաղեցնել այն անձը՝

1) ով դատապարտվել է հանցագործության կատարման համար, և նրա դատվա-ծությունը մարված կամ հանված չէ.

2) որին օրենքի համաձայն արգելվել է ղեկավար պաշտոններ զբաղեցնել.

3) ով նախընթաց երեք տարիների ընթացքում եղել է սնանկանալու պատճառով լուծարված և իրենց պարտատերերի օրինական պահանջները չբավարարած կազմակերպության ղեկավար:

37. Տնօրենն օրենքով, հիմնադրի որոշումներով, լիազորված մարմնի հրամաններով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է ուսումնարանի ընթացիկ գործունեությունը և կրում է պատասխանատվություն իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

38. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս ուսումնարանի անունից, ներկայացնում է նրա շահերն ու կնքում գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի, լիազոր մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով տնօրինում է ուսումնարանի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3)սահմանում է ուսումնարանի կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում ուսումնարանի հիմնարկների, ներկայացուցչությունների, մասնաճյուղերի ղեկավարներին և ուսումնարանի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) տալիս է ուսումնարանի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորագրման իրավունքով լիազորագրեր.

6) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

7) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

8) համաձայն տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշչի՝ հաստատում է ուսումնարանում ուսուցանվող յուրաքանչյուր մասնագիտության ուսումնական պլանը, առկայության դեպքում՝ մոդուլային ուսումնական պլանը, առարկայական և (կամ) մոդուլային) ծրագրերը և դրանցում կատարում փոփոխությունները.

9) հաստատում է այն մասնագիտության կամ մասնագիտական որակավորման գծով ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը, որի պետական կրթական չափորոշիչը հաստատված չէ.

10) ուսումնական պլաններով սահմանում է ուսումնարանի ուսանողների ուսումնառության արդյունքների ընթացիկ, միջանկյալ, ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը.

11) խորհրդի հաստատմանն է ներկայացնում ուսանողական նպաստներ և պետական կրթաթոշակներ ստացող ուսումնարանի ուսանողների անվանական կազմը.

12) կարող է խորհրդին առաջարկություն ներկայացնել ներուսումնարանային կրթաթոշակներ նշանակելու մասին.

13) անհրաժեշտ պայմաններ է ստեղծում ուսումնարանի մանկավարժական կադրերի մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

14) ուսումնարանի ուսանողներին տեղեկատվություն է տրամադրում տվյալ ոլորտում զբաղվածության վիճակի մասին, իսկ հնարավորության դեպքում՝ նաև օժանդակում է նրանց աշխատանքի տեղավորմանը.

15) վերահսկողություն է իրականացնում ուսումնարանում ուսուցման բովանդակության, ուսանողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, դաստիարակչական աշխատանքի կազմակերպման նկատմամբ.

16) ապահովում ուսումնարանի ներքին աշխատանքային կարգապահական կանոնների, սանիտարական նորմերի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահանջների կատարումը.

17) տարեկան մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում լիազորված մարմին.

18) իր լիազորությունների սահմաններում արձակում է ուսումնարանում և նրա ստորաբաժանումներում կատարման համար պարտադիր հրամաններ, հրահանգներ, տալիս է ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

19) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուսումնարանի իրավասությանը վերապահված այլ լիազորություններ, որոնք խորհրդին կամ ուսումնարանի այլ մարմնի վերապահված չեն:

39. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի, լիազորված մարմնի, խորհրդի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

40. Տնօրենի բացակայության դեպքում լիազորված մարմնի հրամանի համաձայն տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

41. Տնօրենը չի կարող՝

1) միաժամանակ զբաղեցնել այլ պետական պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից.

2) անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ.

3) ուսումնարանի հետ կապված հարաբերություններում լինել երրորդ անձանց ներկայացուցիչ.

4) ծառայողական պարտականությունների կատարման համար այլ անձանցից ստանալ նվերներ, գումարներ կամ ծառայություններ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

42. Տնօրենի լիազորությունները դադարեցվում են լիազորված մարմնի որոշմամբ, եթե՝

1) նա դիմում է դրա մասին.

2) լրացել է նրա 65 տարին.

3) նա իր գրավոր համաձայնությամբ ընտրվել կամ նշանակվել է այլ պաշտոնում կամ անցել է իր պաշտոնի հետ անհամատեղելի այլ աշխատանքի.

4) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով նա ավելի քան չորս ամիս անընդմեջ չի ներկայացել աշխատանքի.

5) նա ավելի քան երեք օր անընդմեջ անհարգելի պատճառներով չի ներկայացել աշխատանքի.

6) նա նշանակվել է օրենքի պահանջների խախտմամբ կամ առաջ են եկել սույն կանոնադրության 36-րդ կամ 41-րդ կետով նախատեսված հանգամանքները.

7) նա իր գործառույթներն իրականացնելիս ուսումնարանին կամ պետությանն իր մեղքով հասցրել է վնաս, որի գումարը գերազանցում է ուսումնարանին սեփականության իրավունքով պատկանող գույքի արժեքի հինգ տոկոսը.

8) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նա ճանաչվել է անգործունակ, սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած.

9) օրինական ուժի մեջ է մտել նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը.

10) նա կորցրել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը.

11) դատական կարգով ուսումնարանը ճանաչվել է սնանկ կամ ուսումնարանն ունի դատական կարգով որոշված և դատարանի կողմից համապատասխան վճիռն ընդունվելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում, իր մեղքով չկատարված գույքային պարտավորություն.

12) ուսումնարանի կողմից վճարման ենթակա հարկերը կամ պարտադիր այլ վճարներն իր մեղքով՝ սահմանված ժամկետից հետո հաշվետու ժամանակաշրջանում չի վճարել.

13) մեկ տարվա ընթացքում օրենքի խախտման համար ենթարկվել է կրկնակի կարգապահական պատասխանատվության:

43. Տնօրենի լիազորությունները դադարում են նրա մահվամբ:

44. Սույն կանոնադրության 42-րդ կետի՝

1) 1-ին ենթակետով նախատեսված դեպքում տնօրենի լիազորությունները դադարեցվում են դիմումում նշված օրվանից.

2) 2-րդ, 3-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ և 13-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում տնօրենի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությունը տեղի ունենալու կամ համապատասխան որոշումը, վճիռը կամ դատավճիռն ուժի մեջ մտնելու հաջորդող օրը.

3)այլ ենթակետերով նախատեսված դեպքերում տնօրենի լիազորությունները դադարեցվում են համապատասխան իրադարձությանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում:

45. Սույն կանոնադրության 43-րդ կետով նախատեսված դեպքում տնօրենի լիազորությունները դադարեցվում են մահվան պահից:

46. Տնօրենի հրամանները, հրահանգները, ցուցումները կարող են Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով բողոքարկվել՝ լիազորված մարմնին կամ դատարան:

VI. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

47. Ուսումնարանն ունի մանկավարժական, վարչատնտեսական, արտադրական, ուսումնաօժանդակ և այլ անձնակազմեր: Ուսումնարանի մանկավարժական կազմում ընդգրկվում են դասախոսները, արտադրական ուսուցման վարպետները:

48. Ուսումնարանի մանկավարժական աշխատողների տարակարգերին և պաշտոններին ներկայացվող պահանջները, մրցույթների կազմակերպման և անցկացման, վերապատրաստման և ատեստավորման կարգերը հաստատում է լիազորված մարմինը:

49. Ուսումնարանի աշխատողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով իրավունք ունի՝

1) մասնակցելու ուսումնարանի կառավարմանը.

2) ընդգրկվելու համապատասխան մասնագիտական, առարկայական խորհուրդների կազմում.

3) պետական կրթական ընդհանուր չափորոշչի շրջանակներում ընտրելու և օգտագործելու կրթական գործընթացն ապահովելու համար անհրաժեշտ ուսուցման ու դաստիարակության մեթոդներ, ուսումնական ձեռնարկներ և նյութեր, գիտելիքների գնահատման մեթոդներ.

4) օգտվելու ուսումնարանի տեղեկատվական ֆոնդերից, ուսումնական, գիտական, սոցիալ-կենցաղային, բուժական և այլ ծառայություններից, տեխնիկական հնարավորություններից.

5) օգտվելու այլ իրավունքներից:

50. Ուսումնարանի աշխատողը պարտավոր է՝

1) կատարել սույն կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները.

2) հետևել բարոյականության նորմերին, ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից և արտահայտություններից, որոնք կարող են հանգեցնել հաստատության անձնակազմի բարոյահոգեբանական մթնոլորտի վատացմանը.

3) բարեխղճորեն կատարել իր աշխատանքային պարտականությունները.

4) ապահովել իր գործունեության պատշաճ մասնագիտական մակարդակը, շարունակաբար կատարելագործել իր մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները.

5) չկիրառել դաստիարակության այնպիսի մեթոդներ, որոնք կհանգեցնեն ուսանողի անձի նկատմամբ ֆիզիկական կամ հոգեկան բռնության:

VII. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

51. Ուսումնարանի ուսանողը նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրեր յուրացնելու համար տնօրենի հրամանով, մրցութային հիմունքով ընդունված անձն է:

52. Ուսումնարանի ունկնդիրը տնօրենի հրամանով ընդունված անձն է՝ նախապատրաստական կամ կարճաժամկետ դասընթացներում, մասնագետների որակավորման բարձրացման և վերապատրաստման բաժանմունքում սովորելու համար: Ունկնդիրը կրթական ծառայություններ ստանալիս օգտվում է ուսանողի իրավունքներից:

53. Ուսումնարանի ուսանողի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են սույն կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով:

54. Ուսումնարանի ուսանողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով իրավունք ունի՝

1) ընտրելու տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար պարտադիր (էլեկտիվ) և տվյալ մասնագիտության կամ մասնագիտացման ուսուցման համար ոչ պարտադիր (ֆակուլտատիվ) դասընթացներ, որոնք տրամադրում է ուսումնարանը.

2) մասնակցելու ուսումնարանի կառավարմանը՝ ընդգրկվելով խորհրդի կազմում, մասնակցելու ուսանողական խորհրդի, խմբակների, ակումբների ստեղծմանը և դրանց աշխատանքներին.

3) մասնակցելու իր կրթության բովանդակության ձևավորմանը՝ պահպանելով արհեստագործական կրթության մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների պահանջները.

4) ստանալու կրթություն պետական կրթական չափորոշիչներին համապատասխան և ձեռք բերելու գիտության, տեխնիկայի և մշակույթի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխան գիտելիքներ.

5) ստանալու երկրորդ մասնագիտություն կամ օգտվելու լրացուցիչ (այդ թվում՝ վճարովի) կրթական ծառայություններից.

6) վճարովի ուսուցման համակարգից փոխադրվելու անվճար ուսուցման համակարգ.

7) առողջական պատճառներով կամ այլ բացառիկ դեպքերում ստանալու ակադեմիական արձակուրդ՝ պահպանելով իր ուսանողական իրավունքը, ինչպես նաև վերականգնելու ուսումնառությունը որևէ պատճառով անավարտ թողած իր ուսանողական իրավունքը.

8) տեղափոխվելու մեկ այլ, այդ թվում՝ նաև պետական հավատարմագրում ստացած, մասնագիտական ուսումնական հաստատություն.

9) անվճար օգտվելու ուսումնարանի գրադարանից, մարզական և առողջարանային, մշակութային-լուսավորչական ծառայություններից.

10) մասնակցելու ուսումնարանի հետազոտական, նախագծային աշխատանքների կատարմանը.

11) ստանալու ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման պետական նպաստ և կրթաթոշակ.

12) օգտվելու սահմանված չափի՝ ներառյալ անվանական, ինչպես նաև իրեն ուսման ուղարկած իրավաբանական կամ ֆիզիկական անձանց նշանակած կրթաթոշակներից, նպաստներից և վարկերից, նվիրատվություններից և դրամաշնորհներից.

13) օգտվելու այլ իրավունքներից:

55. Հարգելի պատճառներով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի կամ զինծառայության) ուսումնարանից ազատված ուսանողը վերականգնվելիս՝ պահպանում է նախկինում ունեցած՝ ուսանողական նպաստ կամ կրթաթոշակ ստանալու իրավունքը:

56. Ուսումնարանի ուսանողները և դիմորդներն իրավունք ունեն ծանոթանալու սույն կանոնադրությանը, ուսումնարանի լիցենզիային և ներքին կանոնակարգերին:

57. Ուսումնարանի ուսանողության ինքնակառավարման և նրա շահերը պաշտպանող մարմինն ուսանողական խորհուրդն է, որն ապահովում է ուսանողների մասնակցությունն ուսումնարանի կառավարմանը, համապատասխան մարմինների քննարկմանն է ներկայացնում ուսանողությանն առնչվող հարցեր: Ուսումնարանի ուսանողական խորհուրդը համարվում է ստեղծված և օգտվում է սույն կանոնադրությամբ նախատեսված իրավունքներից՝ խորհրդի նախագահին իր անվանական կազմը և գործունեությանը կարգը պաշտոնապես ներկայացնելու պահից:

58. Ուսումնարանի ուսանողը պարտավոր է՝

1) կատարել սույն կանոնադրության պահանջները և պահպանել ներքին կարգապահական կանոնները.

2) խնամքով վերաբերվել ուսումնարանի գույքին.

3)հարգել աշխատողների և ուսանողների իրավունքներն ու արժանապատվությունը.

4) վճարովի հիմունքներով սովորելիս՝ սահմանված կարգով և ժամկետներում վճարել ուսման վարձը.

5) կատարել կրթական ծրագրերի պահանջները.

6) հաճախել պարտադիր համարվող դասախոսություններին, սեմինար (գործնական) պարապմունքներին.

7) բարձր պահել ուսումնարանի ուսանողի պատիվն ու հեղինակությունը.

8) պահպանել հասարակության բարոյական նորմերը:

59. Բարձր առաջադիմություն, փորձնական-նախագծային աշխատանքներում գործուն և արդյունավետ մասնակցություն ցուցաբերած ուսանողների համար խորհրդի կողմից կարող են սահմանվել խրախուսման նյութական ու այլ ձևեր:

60. Ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի պահանջները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը չկատարելու, անբավարար ակադեմիական առաջադիմություն ցուցաբերելու, ինչպես նաև սույն կանոնադրության կամ ներքին կարգապահական կանոններով նախատեսված պահանջները խախտելու համար ուսանողը կարող է տնօրենի կամ նրա լիազորած անձի կողմից ենթարկվել կարգապահական պատասխանատվության՝ ընդհուպ մինչև ուսումնարանից հեռացվելը:

VIII. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

61. Ուսումնարանի սեփականությունը ձևավորվում է ուսումնարանի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև ուսումնարանի գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

62. Հիմնադիրը կարող է ուսումնարանին անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք կամ հետ վերցնել իր կողմից ուսումնարանին ամրացված գույքը: Ուսումնարանի ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

63. Ուսումնարանը սեփականության իրավունք ունի ամրացված գույքի օգտագործման արդյունքում ուսումնարանի ստացած եկամուտների, ֆիզիկական և իրավաբանական

անձանց կողմից ուսումնարանին նվիրատվության, հանգանակության կամ կտակի ձևով փոխանցված դրամական միջոցների, գույքի և սեփականության այլ օբյեկտների, օրենքով չարգելված այլ աղբյուրների, ինչպես նաև սեփական գործունեությունից ստացված եկամուտների և այդ եկամուտների հաշվին ձեռք բերված գույքի նկատմամբ: Սեփականության իրավունքով ուսումնարանին պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ ուսումնարանի լուծարումից հետո մնացած գույքի:

64. Հիմնադրի կողմից ուսումնարանին ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ ուսումնարանի օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

65. Ուսումնարանն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը: Ուսումնարանի սեփականության պահպանման հոգսը կրում է ուսումնարանը:

66. Ուսումնարանն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարվանից ավելի չի կարող սահմանվել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

67. Ուսումնարանի զբաղեցրած տարածքները (այդ թվում՝ դասասենյակ, լաբորատորիա, առարկայական կաբինետ, մարզադահլիճ, գրադարան-ընթերցասրահ, համակարգչային սենյակ, արհեստանոց, օժանդակ (բակ, մարզահրապարակ, պահեստային մակերես և այլ տարածքներ), ըստ կրթական ծրագրի պետք է համապատասխանեն հիմնադրի սահմանած նորմատիվների պահանջներին:

68. Ուսումնարանն իրավունք չունի իրեն ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման:

69. Ուսումնարանի սեփականության վրա բռնագանձում կարող է տարածվել միայն դատական կարգով:

70. Հիմնադրի կողմից գույքն ուսումնարանին ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

IX. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

71. Ուսումնարանի հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարներ վճարվում են շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

72. Ուսումնարանն ըստ հիմնադրի սահմանած չափի և հատկացումների ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից և օրենքով չարգելված այլ միջոցներից:

73. Ուսումնարանի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) սեփական միջոցները, որոնք գոյանում են ձեռնարկատիրական գործունեության շնորհիվ և օրենքով չարգելված գործունեության այլ տեսակներից.

2) Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, դրամաշնորհներն ու վարկերը.

3) Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեները:

74. Ուսումնարանն իր միջոցների հաշվին աշխատողների աշխատավարձի նկատմամբ կարող է կիրառել հավելումներ:

75. Ուսումնարանը կարող է վճարովի հիմունքներով սովորող ուսանողական համակազմի մինչև տասը տոկոսին, ուսանողի սոցիալական վիճակի և բարձր առաջադիմության արդյունքների հաշվառմամբ, իր միջոցների հաշվին մասնակիորեն փոխհատուցել ուսման վճարը՝

1) սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին.

2) միակողմանի ծնողազուրկ (միածնող) և երկողմանի ծնողազուրկ ուսանողներին.

3) 3 և ավելի անչափահաս կամ 3 և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին.

4) վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխաներ ունեցող ընտանիքների ուսանողներին.

5) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամ ծնողներ ունեցող ուսանողներին.

6) հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների երեխա-ուսանողներին.

7) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին.

8)ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված՝ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ ուսումնարանի հայեցողությամբ.

9) ուսումնարանի հայեցողությամբ՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

76. Ուսումնարանը սահմանված կարգով ֆինանսական գործունեության մասին հաշվետվություն է ներկայացնում լիազորված մարմին:

77. Ուսումնարանը հիմնադրի սահմանած կարգով հրապարակում է իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

78.Ուսումնարանի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել աուդիտի (վերստուգման)՝ հիմնադրի սահմանած կարգով:

X. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

79. Ուսումնարանը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Ուսումնարանը կարող է վերակազմակերպվել հարյուր տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի: Ուսումնարանը դատական կարգով կարող է վերակազմակերպվել օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

80. Ուսումնարանի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

81. Ուսումնարանը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Ուսումնարանը կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

82. Ուսումնարանը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

83. Ուսումնարանի լուծարման դեպքում ուսումնարանի պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ ուսումնարանի ուսանողների (ունկնդիրների) հետագա ուսուցման կարգը սահմանում է հիմնադիրը:

Կազմված է 16.12.2019թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է 3 օրինակից
Օրինակ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի 2019 թվականի
դեկտեմբերի 13-ի N 1252-Ա/2 հրամանով

_____ Ա.Հարությունյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի տարածքային
բաժնի կողմից 14.07.2009թ
Գրանցման թիվ 29.210.02439
ՀՎՀՀ 05536355
03.02.2012թ. գրանցված կանոնադրության թիվ 1-2
փոփոխությունը գրանցվել է ՀՀ արդարադատության
նախարարության իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության կողմից
26.12 2019թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ N4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

1) կանոնադրության վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ N4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ»,

2) կանոնադրության 1-ին և 8-րդ կետերում «կրթության և գիտության» բառերը փոխարինել «կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» բառերով,

3) կանոնադրության 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. ուսումնարանի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գյումրու N4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

2) հայերեն կրճատ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Գյումրու N4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ Министерство образования, науки, культуры и спорта Республики Армения «Гюмрийское государственное ремесленное училище N4» государственная некоммерческая организация.

4) ռուսերեն կրճատ՝ МОНКС РА «Гюмрийское государственное ремесленное училище N4» ГНКО.

5) անգլերեն լրիվ՝ Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia "Gyumri Craftsman State School N4" State Non Profit Organization.

6) անգլերեն կրճատ՝ MESCS RA «Gyumri Craftsman State School N4» SNPO:»:

Սույն փոփոխությունները հանդիսանում են 2012 թվականի փետրվարի 3-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված (գրանցման համար 29.210.02439) Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

Կազմված է 02.03.2021թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է 3 օրինակից
Օրինակ 2
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի 2021 թվականի
փետրվարի 26-ի N 230-Ա/2 հրամանով

_____Վ. Դումանյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
տարածքային բաժնի կողմից 14.07.2009թ
Գրանցման թիվ 29.210.02439
ՀՎՀՀ 05536355
03.02.2012թ. գրանցված կանոնադրության թիվ 1-2
փոփոխությունը գրանցվել է
Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
18.03.2021թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ N 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ)

1. 23-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը շարադրել նոր խմբագրությամբ.

«3) 2-ի թեկնածությունը ուսումնարանի մանկավարժական կազմից լիազորված մարմնին ներկայացնում է տնօրենը, որոնց թեկնածությունն առաջադրվում է ուսումնարանի մանկավարժական խորհրդի կողմից սահմանված ընթացակարգի համաձայն.

4) 3-ի թեկնածությունը ուսումնարանի ուսանողների կազմից լիազորված մարմնին ներկայացնում է տնօրենը, որոնց թեկնածությունն առաջադրվում է ուսումնարանի ուսանողական խորհրդի կողմից սահմանված ընթացակարգի համաձայն:»,

2. 33-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«33. Խորհրդի կազմում թափուր տեղեր առաջանալու դեպքում այն համալրվում է սույն կանոնադրության 22-րդ և 23-րդ կետերի պահանջներին համապատասխան: Թափուր տեղ առաջանալուց հետո տնօրենը տասնօրյա ժամկետում Լիազոր մարմնին է ներկայացնում համապատասխան տեղեկատվություն և/կամ առաջարկություն:»,

3. 66-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«66. Ուսումնարանն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 914-Ն որոշման: Վարձակալության հանձնված գույքի վարձակալական վճարներից ստացված դրամական միջոցներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:»,

4. 66-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 66.1-ին կետով.

«66.1.Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունն ուսումնարաններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված տարածքների

վարձակալությունից մուտքագրված միջոցների 20 տոկոսը տվյալ բյուջետային տարվա վերջում, Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից լիազոր մարմնի ներկայացմամբ, որպես ուսումնարաններին իրենց կանոնադրական գործառույթների իրականացման համար լրացուցիչ հատկացում, տրամադրում է կազմակերպության կառավարումն իրականացնող լիազորված պետական մարմնին՝ համապատասխան ուսումնարաններին փոխանցելու համար:»:

Սույն փոփոխությունները և լրացումը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված (գրանցման համար 29.210.02439) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գյումրու N4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը:

Կազմված է 17.11.2021թ. և բաղկացած է 2 թերթից
Տպագրված է 2 օրինակից
Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի 2021 թվականի
նոյեմբերի 10-ի N 1828-Ա/2 հրամանով

_____ Վ. Դումանյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
տարածքային բաժնի կողմից 14.07.2009թ
Գրանցման թիվ 29.210.02439
ՀՎՀՀ 05536355

03.02.2012 թ. գրանցված կանոնադրության թիվ 1-2
փոփոխությունը գրանցվել է
Հայաստանի Հանրապետության արդարադատության
նախարարության իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
26.12. 2021թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԳՅՈՒՄՐՈՒ N 4 ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

1) 23-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«2) 5-ին, որում ընդգրկվում են պետական պաշտոն զբաղեցնող, շահագրգիռ գերատեսչությունների, գիտության, մշակույթի, տնտեսության տարբեր ոլորտների և Միասնական սոցիալական ծառայության զբաղվածության ոլորտի ներկայացուցիչներ՝ 2, սոցիալական գործընկերներ՝ 3, որոշում է լիազորված մարմինը.»,

2) 25-րդ կետում «քվեարկությանը մասնակցած անդամների» բառերը փոխարինել «խորհրդի անդամների ընդհանուր թվի» բառերով,

3) 28-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«28. Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը: Խորհրդի նիստը կարող է անցկացվել նաև հեռավար եղանակով՝ բացառությամբ տնօրենի մրցույթի: Խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով: Քվեարկության ժամանակ խորհրդի անդամն ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անդամի չի թույլատրվում: Խորհրդի նիստերն արձանագրվում են, իսկ հեռավար կազմակերպելու դեպքում արձանագրությունների

մատյանում կցվում են նաև խորհրդի անդամի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացված առաջարկությունները և դիտողությունները, ինչպես նաև ստավցած քվեարկության արդյունքները:»:

Սույն փոփոխությունները հանդիսանում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված (գրանցման համար 29.210.02439) Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Գյումրու N4 արհեստագործական պետական ուսումնարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության անբաժանելի մասը: